

Անուն----- Թուական-----

Հերոսներ՝ «Տորթ Անգեղ» եւ «Սասունցի Դաւիթ»

Բառագիտութիւն

Ամբողջացո՛ւր նախադասութիւնները հետեւեալ յարմար բառերով:

ծաղրեցին – դէպք – կոչած էին – թշնամի – նշանաւոր – ժայռ – ժողովուրդ -
մոնչելով – փոթորկեց – շողաց – հոր – գոռաց – գոմէշ – սարսափեցաւ

1-Տորթին «Անգեղ» -----, որովհետեւ տգեղ էր:

2-Գիւղացիները Տորթ Անգեղին----- եւ ան շատ բարկացաւ ու
բանդեց իրենց տուները:

3-Գիւղացիները այդ-----էն ետք զգացին իրենց սխալը եւ
ներողութիւն խնդրեցին Տորթէն:

4-Սեւ Ծովէն-----ներ յարձակեցան հայերուն վրայ.
անոնք Տորթէն վախցան, որովհետեւ -----եր նետեց ծովը:

5-Տորթ անգեղ -----դառձաւ ու սիրուեցաւ իր-----էն,
երբ ազատեց իրենց:

6-Անձրեւէն վերջ արեւը-----ծաղիկներուն վրայ:

7-Գայլը երբ մօտեցաւ ոչխարին, ոչխարը -----:

8-Սասունցի Դաւիթը առիւծի նման -----հեծաւ իր ձին ու հովի
պէս -----:

9-Մտրայ Մելիք խորունկ-----մը փորեց ու մտաւ մէջը:

10-Մելիք երբ ----- «կենդանի՛ եմ», Սասունցի Դաւիթը ըսաւ
«Մելի՛ք, ինքզինքդ թօթուէ՛»:

11-----ը կովու եւ եգի նման կենդանի մըն է:

Պատասխանե՛ հետեւեալ հարցումներուն:

1-Տորթը սովորական որսորդ չէր: Ան ի՞նչ կ'ըներ իր բռնած կենդանիները:

2-Գիւղացիները երբ ներողութիւն խնդրեցին Տորթէն, ան ի՞նչ ըրաւ անոնց տունները:

3-Սասունցի Դաւիթին հօրը անունը ի՞նչ է:

4-Ո՞վ յաղթեց այս կռիւին: Բացատրե՛, ինչպե՞ս:

5-Այս տարի քանի՞ հերոսներու անուններ սորվեցար:

Քերականութիւն

Վերածե՛ յոգնակիի. Ուշադրութիւն րբէ՛ ն-ով եւ յ-ով վերջացող բառերուն:

1-տղայ----- 2-սեղան-----

3-անկողին----- 4-շուկայ-----

5-կրիայ----- 6-բոյն-----

7-նարինջ----- 8-գուլպայ-----

